

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է բաց ընթացակարգի հանձնաժողովի
20 թվականի «ամիս» «ամսաթվի թիվ» «որոշման համարը» որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն

Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2015/2ՆԱ

Պատվիրատուն՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» պետական
հիմնարկը, որը գտնվում է ՀՀ ք. Երևան Նալբանդյան 28 հասցեում հասցեում, հայտարարում է բաց
ընթացակարգ:

Բաց ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի
կնքել Մ-1, Երևան – Գյումրի – Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ148+000 – կմ158+000 և
կմ168+000 – կմ171+500 հատվածների անցանելիության ապահովման, Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–
Մեղրի–Իրանի սահման ավտոճանապարհի կմ338+100–կմ342+400 հատվածի հիմնանորոգման, Մ-2,
Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի–Իրանի սահման ավտոճանապարհի կմ 351-ի սողանքային հատվածում
(շուրջ 415 գծմ) ճանապարհի վերականգնման, Մ-3, Մարգարա–Վանաձոր–Տաշիր–Վրաստանի սահման
ավտոճանապարհի կմ137+200–կմ141+000 հատվածի հիմնանորոգման, Հ-39, Մ-10–Գավառ–Մ-10
ավտոճանապարհի կմ0+000–կմ4+300 հատվածի հիմնանորոգման, Արտաշատ քաղաքի կենտրոնական
մուտքի հիմնանորոգման և Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի–Իրանի սահման ավտոճանապարհի կմ
358+025 հատվածում վթարված կամուրջի վերականգնման նախագծային աշխատանքների *կալամանագրեր* (այսուհետև՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա
օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու
հանգամանքից, ունի բաց ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

Բաց ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով
ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և
պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը
հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել
տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար,
բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ
մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող
մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների
կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության
համապատասխանություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական
փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների
թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու
սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին,
մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ «40»-րդ օրը ժամը «17:00»-ը: Ընդ
որում, փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել
գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն
անվճար այդպիսի պահանջ ստանալու օրը:

Գնումների բազային միավորի հիսնապատիկը գերազանցող գնումների դեպքում, հայտերը
հայերենից բացի կարող են ներկայացվել նաև ռուսերեն և /կամ/ անգլերեն:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է
հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային
օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝
սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված «40»-րդ օրվա ժամը «17:00»-ը և դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

Սույն գնման գործընթացը իրականացվելու է էլեկտրոնային ձևով՝ www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով, www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով, «նոյեմբերի» «19» -ին ժամը «17:00»-ին:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն հրավերի 1-ին մասի 12-րդ բաժնով սահմանված կարգով:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ սույն ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն սույն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Դավիթ Հայրապետյանին:

Հեռախոս՝ 010 58 05 23:

Էլ. փոստ՝ dhairapetyan@transportpiu.am:

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝ -

Պատվիրատու՝ «Տրանսպորտի ԾԻԳ» ՊՀ :

Для получения дополнительной информации относительно данного приглашения можете обратиться г-ну Давиду Айрапетяну, специалисту отдела закупок и управление контрактами, Государственное учреждение “Офис по реализации транспортных программ” Министерства транспорта и связи РА. Тел: (+37410) 580 523, эл.почта: dhairapetyan@transportpiu.am

Заказчик: Государственное учреждение “Офис по реализации транспортных программ” Министерства транспорта и связи РА.

ANNOUNCEMENT

On Open procedure

The text of this announcement is approved by the Decision N 2 of Evaluation Committee dated 9 October 2014 and is being published according to Article 24 of the Law of the Republic of Armenia "On Procurements".

The code of the simplified procedure: TPIU-OPWP-2015/2DW

The Client, "Transport Projects Implementation Unit" State Institution of the Ministry of Transport and Communication of the Republic of Armenia, located at 28 Nalbandyan street, Yerevan, RA is announcing the open procedure.

The participant declared as the winner in the open procedure according to the defined order will be suggested to sign a contract for design for civil works for rehabilitation of the roads section M-2, Yerevan–Eraskh–Goris–Meghri–Iranin border km338+100–km342+400, restoration of landslide road section M-2, Yerevan–Eraskh–Goris–Meghri–Iranin border on the km 351 (about 415l.m.), for rehabilitation of the roads section M-3, Margara–Vanadzor–Tashir–Georgian border km137+200–km141+000, for rehabilitation of the roads section R-39 M-10–Gavar–M-10 km0+000–km4+300, for rehabilitation of the central entrance of Ararat city and restoration of damaged bridge on the road M-2, Yerevan–Eraskh–Goris–Meghri–Iranin border km358+025 (hereinafter referred to as contract).

According to the terms of Article 6 of the RA Law "On Procurements", all persons or entities, irrespective of being a foreigner, a foreign entity or a stateless person, may submit bids for the open procedure.

The persons who were announced bankrupt, have overdue debts of social and tax payments of RA, has been convicted of economic activity or public services previous three years by the time of filling the application, except those cases when the conviction has been defined by the law or is canceled, which are included in the procurement process without the right to participate in the list of participants.

The participant must have obligations required by the invitation of the professional activities of contract, professional experience, technical resources, financial resources, labor resources.

The successful participant is determined from the participant's submitted responsive evaluated bids. The preference will be given to and a contract will be signed with participant who submitted financial proposal in minimal price.

To receive the invitation of this procedure it is required to apply to the Client on the 40-th day as from the day of publication of the announcement, at **17:00**. To receive an invitation in a hard copy it is necessary to send a written request to the Client. The Client is obliged to provide the hard copy free of charge.

If the procurement basic unit exceeds fifty-fold, the bids besides drowning up in Armenian should be presented also in Russian and/or English languages. The Client is obliged to provide the bids in Russian or English languages free of charge.

In case of getting a request for providing the invitation electronically, the Client shall ensure provision of invitation via electronic email within the working day following the day of getting such a request.

Not getting an invitation in the order prescribed by this invitation shall not restrict the right of the participant to participate in this procedure. The bids for the open procedure should be submit electronically through www.armeps.am website on the 40-th day as from the day of publication of the announcement, at **17:00**:

This given procurement procedure will be carried out electronically via www.armeps.am website.

The bid opening will be electronically via www.armeps.am website on November 20, at **17:00** at the address RA, Yerevan, 28 Nalbandyan St, Ministry of Transport and Communication 3rd floor room 307.

The complaints regarding the open procedure are presented to Procurement Assistance Centre at the following address Komitas 54/b. The appeal is conducted by the order defined by the 1st part of section 12 of the given invitation.

Participants should present to the Client all documentation required by the open procedure invitation to bid to evaluate their right to participate in bidding and compliance of qualification data of the participants with the conditions defined by the open procedure invitation to bid.

For further information regarding this announcement you can apply to Mr. David Hayrapetyan, procurement specialist of Procurement and Contracts Management Department, “Transport Projects Implementation Unit” State Institution, Ministry of Transport and Communication of the Republic of Armenia.

Tel: (+37410) 580 523

Email: dhairapetyan@transportpiu.am

Client: “Transport Projects Implementation Unit” State Institution,

Ministry of Transport and Communication of the Republic of Armenia

Հաստատված է
ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2015/2ՆԱ ծածկագրով
բաց ընթացակարգի հանձնաժողովի
2014թ. հոկտեմբերի 9-ի թիվ 3 որոշմամբ

ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» պետական հիմնարկ

Հ Ր Ա Վ Ե Ր

ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» պետական հիմնարկի Կարիքների մամար՝ Մ-1, Երևան – Գյումրի – Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ148+000 – կմ158+000 և կմ168+000 - կմ171+500 հատվածների անցանելիության ապահովման, Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի-Իրանի սահման ավտոճանապարհի կմ338+100–կմ342+400 հատվածի հիմնանորոգման, Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի-Իրանի սահման ավտոճանապարհի կմ 351-ի սողանքային հատվածում (շուրջ 415 գծմ) ճանապարհի վերականգնման, Մ-3, Մարգարա–Վանաձոր–Տաշիր–Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ137+200-կմ141+000 հատվածի հիմնանորոգման, Հ-39, Մ-10–Գավառ–Մ-10 ավտոճանապարհի կմ0+000–կմ4+300 հատվածի հիմնանորոգման, Արտաշատ քաղաքի կենտրոնական մուտքի հիմնանորոգման և Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի-Իրանի սահման ավտոճանապարհի կմ 358+025 հատվածում վթարված կամուրջի վերականգնման նախագծային աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված բաց ընթացակարգի

Հարգելի մասնակից

- նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

- հայտերը ներբեռնելիս և ներկայացնելիս պետք է առաջնորդվել www.armeps.am կայքում (կայքի վերևի ծախս անկյունում) տեղադրված ժամացույցով,

- հայտ կազմելիս անհրաժեշտ է ուշադրությամբ ծանոթանալ կայքի «Նորություններ» և «Հաճախ տրվող հարցեր» բաժիններում պարբերաբար տեղադրվող և թարմացվող նյութերին,

- եթե ընթացակարգը չափաբաժիններով է, ապա առաջին քայլով պետք է www.armeps.am կայքի «Հայտ» դաշտում նախապես նշել այն չափաբաժինը կամ չափաբաժինները, որոնց համար մասնակիցը հայտ է ներկայացնում, որից հետո նոր միայն լրացնել մնացած դաշտերը, այլապես հայտի փաստաթղթերը չեն բացվի գնահատման ժամանակ, վերոգրյալ մասը մանրամասն ներկայացված է www.armeps.am կայքի «Հաճախ տրվող հարցեր» բաժնում,

- Armeps համակարգի հետ հարցեր և խնդիրներ առաջանալիս դիմել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով (հեռախոս՝ 28-93-20):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» պետական հիմնարկի կարիքների մամար՝ Մ-1, Երևան – Գյումրի – Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ148+000 – կմ158+000 և կմ168+000 - կմ171+500 հատվածների անցանելիության ապահովման, Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի–Իրանի սահման ավտոճանապարհի կմ338+100–կմ342+400 հատվածի հիմնանորոգման, Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի–Իրանի սահման ավտոճանապարհի կմ 351-ի սողանքային հատվածում (շուրջ 415 գծմ) ճանապարհի վերականգնման, Մ-3, Մարգարա–Վանաձոր–Տաշիր–Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ137+200–կմ141+000 հատվածի հիմնանորոգման, Հ-39, Մ-10–Գավառ–Մ-10 ավտոճանապարհի կմ0+000–կմ4+300 հատվածի հիմնանորոգման, Արտաշատ քաղաքի կենտրոնական մուտքի հիմնանարոգման և Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի–Իրանի սահման ավտոճանապարհի կմ 358+025 հատվածում վթարված կամուրջի վերականգնման նախագծային աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված բաց ընթացակարգի հրավերի

ՄԱՍ I.

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
6. Հայտի ապահովումը
7. Հայտերի բացումը
8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի կնքումը
10. Պայմանագրի ապահովումը
11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

ՄԱՍ II. ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ

1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները և որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը
4. Հայտի գնային առաջարկը
5. Հավելվածներ 1-9
6. Ցանկ մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» պետական հիմնարկի (այսուհետև՝ Պատվիրատու)՝ կարիքների համար՝ Մ-1, Երևան – Գյումրի – Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ148+000 – կմ158+000 և կմ168+000 – կմ171+500 հատվածների անցանելիության ապահովման, Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի–Իրանի սահման ավտոճանապարհի կմ338+100–կմ342+400 հատվածի հիմնանորոգման, Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի–Իրանի սահման ավտոճանապարհի կմ 351-ի սողանքային հատվածում (շուրջ 415 գծմ) ճանապարհի վերականգնման, Մ-3, Մարգարա–Վանաձոր–Տաշիր–Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ137+200–կմ141+000 հատվածի հիմնանորոգման, Հ-39, Մ-10–Գավառ–Մ-10 ավտոճանապարհի կմ0+000–կմ4+300 հատվածի հիմնանորոգման, Արտաշատ քաղաքի կենտրոնական մուտքի հիմնանորոգման և Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի–Իրանի սահման ավտոճանապարհի կմ 358+025 հատվածում վթարված կամուրջի վերականգնման նախագծային աշխատանքների ձեռքբերման նպատակով «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2015/2ՆԱ» ծածկագրով անցկացվող բաց ընթացակարգի (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ), ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

՝«Տրանսպորտի ԾԻԳ» ՊՀ –ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ dhairapetyan@transportpiu.am

1. ԳԼՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» պետական հիմնարկի կարիքների համար՝ Մ-1, Երևան – Գյումրի – Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ148+000 – կմ158+000 և կմ168+000 – կմ171+500 հատվածների անցանելիության ապահովման, Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի-Իրանի սահման ավտոճանապարհի կմ338+100–կմ342+400 հատվածի հիմնանորոգման, Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի-Իրանի սահման ավտոճանապարհի կմ 351-ի սողանքային հատվածում (շուրջ 415 գծմ) ճանապարհի վերականգնման, Մ-3, Մարգարա–Վանաձոր–Տաշիր–Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ137+200-կմ141+000 հատվածի հիմնանորոգման, Հ-39, Մ-10–Գավառ–Մ-10 ավտոճանապարհի կմ0+000–կմ4+300 հատվածի հիմնանորոգման, Արտաշատ քաղաքի կենտրոնական մուտքի հիմնանորոգման և Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի-Իրանի սահման ավտոճանապարհի կմ 358+025 հատվածում վթարված կամուրջի վերականգնման նախագծային աշխատանքների ձեռքբերումը, որոնք խմբավորված են 7(յոթ) չափաբաժինների՝

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը
1	Մ-1, Երևան – Գյումրի – Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ148+000 – կմ158+000 և կմ168+000 – կմ171+500 հատվածների անցանելիության ապահովման աշխատանքների նախագծային աշխատանքներ
2	Մ-2, Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի - Իրանի սահման ավտոճանապարհի կմ338+100 – կմ342+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծային աշխատանքներ
3	Մ-2, Երևան - Երասխ - Գորիս - Մեղրի - Իրանի սահման ավտոճանապարհի կմ 351-ի սողանքային հատվածում (շուրջ 415 գծմ) ճանապարհի վերականգնման նախագծային աշխատանքներ
4	Մ-3, Մարգարա – Վանաձոր – Տաշիր – Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ137+200 - կմ141+000 հատվածի հիմնանորոգման նախագծային աշխատանքներ
5	Մ-3, Մարգարա – Վանաձոր – Տաշիր – Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ137+200 - կմ141+000 հատվածի հիմնանորոգման նախագծային աշխատանքներ
6	Հ-39, Մ-10 – Գավառ – Մ-10 ավտոճանապարհի կմ0+000 – կմ4+300 հատվածի հիմնանորոգման նախագծային աշխատանքներ
7	Արտաշատ քաղաքի կենտրոնական մուտքի հիմնանորոգման նախագծային աշխատանքներ

ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» պետական հիմնարկի կարիքների համար՝ Մ-1, Երևան – Գյումրի – Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ148+000 – կմ158+000 և կմ168+000 – կմ171+500 հատվածների անցանելիության ապահովման, Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի-Իրանի սահման ավտոճանապարհի կմ338+100–կմ342+400 հատվածի հիմնանորոգման, Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի-Իրանի սահման ավտոճանապարհի կմ 351-ի սողանքային հատվածում (շուրջ 415 գծմ) ճանապարհի վերականգնման, Մ-3, Մարգարա–Վանաձոր–Տաշիր–Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ137+200-կմ141+000 հատվածի հիմնանորոգման, Հ-39, Մ-10–Գավառ–Մ-10 ավտոճանապարհի կմ0+000–կմ4+300 հատվածի հիմնանորոգման, Արտաշատ քաղաքի կենտրոնական մուտքի հիմնանորոգման և Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի-Իրանի սահման ավտոճանապարհի կմ 358+025 հատվածում վթարված կամուրջի վերականգնման

նախագծային աշխատանքների տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

Սույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները.

«Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն» և «ինժեներական հետազննում»

ըստ հետևյալ ոլորտների՝

Չափաբաժինների համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	2
1	Տրանսպորտային
2	
3	
4	

Մ-1, Երևան – Գյումրի – Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ148+000 – կմ158+000 և կմ168+000 – կմ171+500 հատվածների անցանելիության ապահովման, Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի–Իրանի սահման ավտոճանապարհի կմ338+100–կմ342+400 հատվածի հիմնանորոգման, Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի–Իրանի սահման ավտոճանապարհի կմ 351-ի սողանքային հատվածում (շուրջ 415 գծմ) ճանապարհի վերականգնման, Մ-3, Մարգարա–Վանաձոր–Տաշիր–Վրաստանի սահման ավտոճանապարհի կմ137+200–կմ141+000 հատվածի հիմնանորոգման, Հ-39, Մ-10–Գավառ–Մ-10 ավտոճանապարհի կմ0+000–կմ4+300 հատվածի հիմնանորոգման, Արտաշատ քաղաքի կենտրոնական մուտքի հիմնանորոգման և Մ-2, Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի–Իրանի սահման ավտոճանապարհի կմ 358+025 հատվածում վթարված կամուրջի վերականգնման նախագծային աշխատանքների գնումը իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, իսկ պայմանագիրը կնքվելու է՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ «Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե մասնակիցը հայտով ներկայացրել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին,

2) բացի հայտարարությունից, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

2.2 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝

1) որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ,

2) որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Եթե մասնակիցը հայտով ներկայացրել է սույն հրավերի II մասի 2.2.1 կետով նախատեսված գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:

2.3 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,

2) մասնագիտական փորձառություն,

3) տեխնիկական միջոցներ,

4) ֆինանսական միջոցներ,

5) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում մասնակցի՝

- «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հետևյալ տեղեկությունները.

Նախկինում կատարված պայմանագրերի		
առարկան	ծավալը՝ գումարային արտահայտությամբ (ՀՀ դրամ)	պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները
1	2	3
Տարեթիվը՝ թվական		
1.		
2.		
..		
Տարեթիվը՝ թվական		
1.		
2.		
..		
Տարեթիվը՝ թվական		
1.		
2.		
..		

2) մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն (հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման /նմանատիպ/ աշխատանքների կատարման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: Նմանատիպ են համարվում **տրանսպորտային ոլորտում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման փորձաքննության** աշխատանքների կատարումը:

- «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.2), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե՝

դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից,

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3) մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

- «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ սույն հրավերով պահանջվող տեխնիկական միջոցների առկայության մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները: Տեխնիկական միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

N	Տեխնիկական միջոցի անվանումը	Տեխնիկական միջոցի մակնիշը, պետհամարանիշը, (եթե առկա է) և արտադրության տարեթիվը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը
1			
2			

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող տեխնիկական միջոցներն են (ցանկացած քանակով չափաբաժիններին մասնակցության համար)

Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
Թեղողիտ	ցանկացած	1
Տախտումետր	թվային	1
Հորատող մեքենա	УГБ-15С տիպի կամ համանման	1
Համակարգիչ (լրակազմ), նախագծման համար անհրաժեշտ մասնագիտական ծրագրային ապահովումով («CREDO» կամ «CARD/1» կամ համարժեք)	ցանկացած	1
Մարդատար ավտոմեքենա	ցանկացած	1

- «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված է պարտադիր աուդիտի ենթարկվելու պահանջ՝ պետք է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերով ներկայացնի չձևափոխված/դրական/ աուդիտորական եզրակացություն:

2) Այն ընկերությունների դեպքում, որոնց համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված է պարտադիր աուդիտի ենթարկվելու պահանջ՝ Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե աուդիտորական եզրակացությունը տրված է ՀՀ կառավարության 29/11/2011թ. N 1931-Ն որոշմամբ նախատեսված <<Աուդիտի միջազգային ստանդարտ 700-ի>> պահանջներին համապատասխան:

- «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.4) պայմանագրի կատարման համար սույն հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետներ				
անունը, ազգանունը	որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				
..				

Ընդ որում աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

3) մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են՝ (ստորև ներկայացվող յուրաքանչյուր որակավորմով պահանջվող առնվազն 1 (մեկ) մասնագետ յուրաքանչյուր չափաբաժնին մասնակցելու համար):

Հ/հ	Որակավորումը	Մասնագիտական փորձը		
		գործունեության ոլորտը	կատարած աշխատանքը	նվազագույն մասնագիտական փորձը
1	2	3	4	5
1	ճարտարագետ-շինարար	տրանսպորտային շինարարություն	տրանսպորտային շինարարության նախագծային աշխատանքների գլխավոր ճարտարագետ	3 տարի
2	արհեստական կառուցվածքների ճարտարագետ	արհեստական կառուցվածքների շինարարություն	արհեստական կառուցվածքների ճարտարագիտական հետազննում և նախագծում	3 տարի
3	երկրաբան	երկրաբանություն	երկրաբանական հետազոտությունների իրականացում	3 տարի

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

3. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում www.armeps.am կայքի (այսուհետև՝ կայք) միջոցով: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում և կայքում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում և կայքում:

3.5 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում և կայքում հայտարարության հրապարակման օրվանից: Այդ դեպքում մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման գործողության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում:

4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը կայքի միջոցով Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի հայտ:

Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար¹: Ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Ընթացակարգի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ Բաց ընթացակարգի հայտերը պատրաստելու հրահանգում:

4.1.1 Մասնակիցն առաջին անգամ Կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգ (այսուհետև՝ Համակարգ) մուտք գործելիս՝ տրամադրված գաղտնաբառը պարտադիր փոխարինում են նոր գաղտնաբառով, ընդ որում, գաղտնաբառը պետք է բաղկացած լինի առնվազն 8 նիշից, այդ թվում՝ 8 նիշում առնվազն մեկ տառից և մեկ թվանշանից: Կենտրոնը պատասխանատվություն չի կրում համակարգում մասնակիցների անունից չարտոնված գործողությունների (անգործության) համար:

4.1.2 Համակարգում որպես մասնակից գրանցվելու նպատակով մասնակիցը մուտք է գործում կայք և լրացնում համապատասխան պահանջվող տեղեկատվությունը, որից հետո գրանցումը հաստատելու նպատակով էլեկտրոնային փոստի միջոցով ստացված գործարքի թիվը մուտքագրում է իր էջում և Կենտրոնին տրամադրում է (առձեռն կամ փոստով) հետևյալ փաստաթղթերը՝

1) հայտարարություն համակարգում գրանցվելու ցանկություն ունենալու և դրանից բխող քաղաքացիաիրավական պարտավորությունները և պատասխանատվությունն ընդունելու վերաբերյալ (Հավելված N Ա): Հայտարարության տեքստը տեղադրված է կայքում, իսկ թղթային տարբերակը Կենտրոնը տրամադրում է նման պահանջ ստանալու դեպքում՝ անմիջապես.

2) պետական գրանցման վկայականի՝ ներառյալ բոլոր ներդիրների պատճենները՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ իրավաբանական անձ լինելու դեպքում, իսկ Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ լինելու դեպքում՝ իր երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված իրավաբանական անձի գրանցման համապատասխան փաստաթղթի պատճենը, եթե այն կազմված է անգլերենով կամ ռուսերենով: Գրանցման փաստաթուղթն այլ լեզվով կազմված լինելու դեպքում ներկայացվում է նոտարական կարգով վավերացված թարգմանությունը՝ հայերենով, ռուսերենով կամ անգլերենով:

3) անձնագրի պատճենը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելու դեպքում, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսանալու դեպքում՝ անձը հավաստող փաստաթղթի պատճենը, եթե այն կազմված է անգլերենով կամ ռուսերենով: Անձը հավաստող փաստաթուղթն այլ լեզվով կազմված լինելու դեպքում ներկայացվում է նոտարական կարգով վավերացված թարգմանությունը՝ հայերենով, ռուսերենով կամ անգլերենով:

4.1.3 Սույն հրավերի 4.1.2-րդ կետով սահմանված փաստաթղթերն ստալանու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնը հաստատում է մասնակցի գրանցումը Համակարգում:

4.1.4 Համակարգում մասնակիցներին գրանցելուց հետո համակարգն էլեկտրոնային եղանակով յուրաքանչյուրին տեղեկացնում է իր անձը համակարգում հաստատող գործարքի թվի մասին: Գրանցված մասնակիցները 30 օրացուցային օրվա ընթացքում պետք է մուտք գործեն Համակարգ և մուտքագրեն էլեկտրոնային ուղերձ-նամակով ստացված գործարքի թիվը, հակառակ դեպքում համակարգում վերջիններիս գրանցումը կհամարվի անվավեր և կպահանջվի նոր գրանցում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել կայքով ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում և կայքում հրապարակվելու պահից հաշված «40»րդ օրվա ժամը «17:00»-ն²: Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ Դավիթ

¹ Եթե ընթացակարգը չափաբաժիններով է, ապա առաջին քայլով պետք է www.armeps.am կայքի «Հայտ» դաշտում նախապես նշել այն չափաբաժինը կամ չափաբաժինները, որոնց համար մասնակիցը հայտ է ներկայացնում, որից հետո նոր միայն լրացնել մնացած դաշտերը, այլապես հայտի փաստաթղթերը չեն բացվի գնահատման ժամանակ:

² Հայտը ներկայացնելիս առաջնորդվել www.armeps.am կայքի (կայքի վերևի ծախս անկյունում) տեղադրված ժամացույցով և ուշադրություն դարձնել www.armeps.am կայքում սահմանված՝ «Ժամանակի սահմանափակում հայտերի սրացման կամ մասնակցության հայտերի համար» մասով սահմանված վերջնաժամկետին:

Հայրապետյանը: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում Համակարգի կողմից:

4.3 Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. սույն հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը,

բ. գնային առաջարկ,

գ. հայտի ապահովում,

դ. էլեկտրոնային փոստի հասցեն,

ե. հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

5. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

6. ՀԱՅՏԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

6.1 Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից:

Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 7 հավելվածով:

6.2 Հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

6.3 Հայտի ապահովման գործողության ժամկետը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

7. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

7.1 Հայտերի բացումը կկատարվի «40»-րդ օրվա ժամը «17:00»-ին կայքի միջոցով: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնի դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամն իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացնում բացման ենթակա այն հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատում է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնվում է հայտերի բացման մասին արձանագրությունը (համակարգում՝ հաշվետվություն), որը հայտերի բացման օրը հանձնաժողովի քարտուղարը ոչ ավտոմատ եղանակով տրամադրում է մասնակիցներին:

7.1.1 Գնահատման գործընթացը կատարվում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

7.1.2 Գնահատման արդյունքները վավերացվում են գնահատող հանձնաժողովի նախագահի կողմից, որից հետո հայտերը դասակարգվում են ըստ գնահատման արդյունքների՝ նվազագույն գնային առաջարկից մինչև առավելագույն գնային առաջարկը:

7.1.3 Գնահատող հանձնաժողովի նախագահին անմիջապես ստեղծում է գնահատման մասին արձանագրությունը՝ էքսել (MS-Excel) ֆայլով:

7.1.4 Գնահատող հանձնաժողովի անդամները հայտերի բացման օրը հաստատում կամ մերժում են գնահատող հանձնաժողովի նախագահի ստեղծած արձանագրությունը:

7.1.5 Պատվիրատուի ղեկավարը հաստատում կամ մերժում է արձանագրությունը: Մերժելու դեպքում պատվիրատուի ղեկավարը պահանջում է հայտերի վերագնահատում, որից հետո վերջնական հաստատում է արձանագրությունը:

7.2 Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հայտերի բացման օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում հայտերի բացման արձանագրության պատճենները տրամադրվում են բոլոր մասնակիցներին:

7.2.1 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

7.2.2 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս՝ գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 4.3 կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

7.2.3 Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ տվյալ օրվա Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքով³:

7.2.3.1 Գնահատող հանձնաժողովի կողմից ստուգվում են ոչ գնային պայմաններին համապատասխանող հայտերում ներառված գնային առաջարկների թվաքանական ճշտությունը: Թվաքանական սխալների հայտնաբերման դեպքում գնահատող հանձնաժողովը կատարում է սխալների ուղղում հետևյալ կարգով.

1) եթե առկա է անհամապատասխանություն գումարների թվային և բառային արտահայտությունների միջև, ապա հիմք է ընդունվում բառային արտահայտությունը:

2) եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի և տվյալ (առանձին) աշխատանքի ընդհանուր քանակի սխալ բազմապատկման արդյունք է, ապա ուղղումը կատարվում է միավորի համար առաջարկված գնի պահպանմամբ՝ փոխելով աշխատանքի համար առաջարկված ընդհանուր գինը:

3) եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի տասնորդական գրառման մեջ ստորակետի ոչ ճիշտ տեղում դնելու կամ սխալ կլորացման արդյունք է, ապա ճշտումը կատարվում է տվյալ աշխատանքի համար առաջարկված ընդհանուր գնի պահպանմամբ՝ ճշտելով միավորի գինը:

4) գնահատող հանձնաժողովը կատարված ուղղումների արդյունքների մասին երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին: Եթե մասնակիցը ծանուցումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով չի հայտնում իր համաձայնությունը ճշգրտված գնային առաջարկի մասին, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

7.2.4 Հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը:

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

7.2.5 Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե հրավերին (ծանուցմանը) համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ապա՝

1) առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, ընդ որում՝ սույն կետի

³ եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հրավերով սահմանված փոխարժեքով և հիմք ընդունելով հաստատված բնօրինակ փաստաթղթից արտադրված (սկանավորված) տարբերակով ներբեռնված փաստաթղթում նշված գինը:

համաձայն էլեկտրոնային եղանակով ծանուցման (հրավերի տրամադրման) դեպքում պարտադիր է Մասնակցի կողմից ծանուցման ստացման ավտոմատ եղանակով հետ հաստատումը, իսկ գրավոր տարբերակով ծանուցման (հրավերի տրամադրման) դեպքում ծանուցումն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հետադարձ ծանուցմամբ, կամ Մասնակցին հանձնվում է առձեռն՝ նշելով վերջինիս կողմից դրա ստացման ամսաթիվը: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

2) բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը

3) յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար, նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը:

